№ 68 Մայիսի 8 (20) 1879 Մայիսի 8 (20) № 68

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գաւառական կեանքը։—Ներքին տեսութիւն։ Մի առաջարկութիւն։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Վանի և շրջակայից մէջ պատահած հարստահարութիւնները։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Խորհուրդ Ծնողներին երեխաները պահելու մասին։

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Ինչքան կրկնես հային, որ բացի ուսումնարանից, պէտք է ուշադրութիւն դարձնել և հասարակական կեանքի այլ կողմերի վրա,—ոչինչ չէ օգնում։ Հայը, բացի ուսումնարանից ուրիշ ոչինչ հասարակական երևոյթ չէ նկատում իր չորս կողմը։

Գաւառական այն քաղաքներից, որտեղ ուսումնարաններ չը կան, հայոց լրագիրը գրեթէ ոչինչ թղթակցութիւն էլ չէ ստանում։ Հենց որ հիմնվում է այս կամ այն քաղաքում կամ գիւղում մի դպրոց,—իսկոյն սկսվում են երեւալ թղթակցութիւններ այն գիւղից կամ քաղաքից։ Եւ այդ թղթակցութիւնները իսկապէս մանկավարժական բնաւորութիւն չունեն, չեն ջանում քննադատել դաստուութեան մեթոդի այս կամ այն պակասութիւնը, ուսումնարանի այս կամ այն պակասութիւնը, նրա անյարմար ընթացքը տեղական պէտքերի վերաբերութեամբ,—ոչ, թղթակցութիւնների նիւթը միմիայն ուսուցիչների իրար մէջ, ուսուցիչների և հոգաբարձուների, կամ վերջապէս դրպրոցի վարչութեան և հոգևոր իշխանութեան մէջ եղած երկպառակութիւնների նկարագիրն է....

Ամեն տեղ դպրոցը ժողովրդի նոր սերունդի կրթարանն է։ Այդ է նրա միակ պաշտօնը։

Իսկ հայերի մէջ դպրոցը կարծես, բոլորովին այլ պաշտօն և նպատակ ունի։ Նա կուսակցութիւնների իրար մէջ մաքառման մէջ վարժվելու ասպարէզ է....

Մեզանում դպրոցը հիմնվում է կուսակցական կռիւների օգնութեամբ, պահպանվում է կուսակցական կռիւներով և վերջապէս քանդվում է կուսակցական կռիւների շնորհով....

Այդ անմխիթար և վերին աստիճանի փնասակար և վտանգաւոր երևոյթը հետևանք է մեր ուղեղի աղքատ զարգացման, հետևանք է մեր հասարակական մտաւոր և բարոյական կեանքի զարգացման աղքատութեան։

Դպրոցը պէտք է կուսակցական կռիւներից դուրս լինի, նա պէտք է համեստութեամբ սահմանափակվի իր նեղ ասպարիզի մէջ մանուկ սերունդի կրթարան լինել, իսկ հասարակական կրքերը, կուսակցական մաքառումները, ցանկալի է, որ ուրիշ աւելի լայն, աւելի ընդարձակ հասարակական երևոյթներին և գործերին իրանց ոյժերը նուիրեն, ցանկալի է որ նրանք երեխայաբար և ապարդիւն կերպով իրանց ոյժերը իզուր չը վատնեն այնպիսի մի գործին, դպրոցին, որ կատարելապէս աջողվելու և օրինաւոր պտուղներ բերելու համար, պէտք է ծլի, զարգանայ և ծաղկի բարոյական կատարեալ հանգստութեան և խաղաղութեան մէջ, և ոչ թէ կրքոտ կռիւների ասպարէզ դառնայ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Ներկայ հասարակական կազմակերպութեամբ մարդկային սեռի մի ամբողջ կէսը—իգական սեռը հեռացրած է քաղաքակրթութեան նպաստող գործունէութիւնից. կանանց ցանկալի ազատութեան հզօր դաղափարը ձգտում է ոչնչացնել այն կապանքները, որոնք այսքան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴ ԾՆՈՂՆԵՐԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Թէ որքան երեխաներ են զոհ լինում մահին մեր գիւղերում և քաղաքներում իրանց ծնողների տգիտութիւնից և առաւել ևս անհոգութիւնից, այս մի շատ ցաւալի ճշմարիտ իրողութիւն է։ «Մշակում» շատ անգամ կարդում ենք, որ այս կամ այն գիւղում տիրապետում են երեխաների զանազան հիւանդութիւններ։ Մեր պարտաւորութիւնը համարեցինք այս պատճառով հրատարակել վերոյիշեալ վերնագրով փոքր յօդուածը։ *)

Առողջապահական ընկերութիւնը Պրենցլայում (Пренцлау) երեխաների շատ մեծ մահկանացութիւնը պակասեցնելու համար, որ տիրապետում է այս քաղաքում, մշակեց հետևեալ խորհուրդները, որոնք արժանի են առաւել ևս տարածվելու, տպեց նրանց իր հաշուով և կարգադրեց ձրի բաժանել ամենին, ով կը յայտնէ, որտեղ հարկն է, երեխայի ծնունդը։ Եթէ մանկաբարձ կին է յայտնում այս մասին, նա ստանում է մի թերթ խորհուրդների, որ յանձնվի ծնողներին։ Ահա թերթի բովանդակութիւնը։

Երեխայի առողջութեան համար հարկաւոր է լաւ մաքուր օդ։ Սորա համար հարկաւոր է հոգալ շուտ շուտ փոխել սենեակի օդը և հեռացնել թոզը, ծուխը և արտաշնչութիւնը։ Պէտք է, որքան կարելի է, զգուշանալ չը ցամաքացնել շորերը կամ բարձերը կրակի մօտ, չը ծածկել երեխայի գլուխը և երեսը թաշկինակներով և ծածկոցներով, և այլն։

Առաջին երկու շաբաթվայ ընթացքում պէտք է փոքր ինչ չափաւորել լոյսը, երկու ամսից յետոյ հեռանալ մութից և կիսալոյսից օրով, իսկ գիշերով, եթէ կարելի է կանթեղի վառելուց։

Միայն առաջին 8—14 օրերի ընթացքում հարկաւոր է, մանաւանդ թոյլ երեխաների համար, փոքր ինչ առաւել տաքացնել սենեակը, բայց յետագայ օրերում վնաս է։ Սենեակի տաքութիւնը լաւ է, որ լինի 14|° Ռ։

Մաքրութիւնը ամենահարկաւոր պայմանն է առողջութեան համար։

Առաջին տարվայ ընթացքում հարկաւոր է լողացնել երեխաները ամենայն օր և շուտ շուտ, լաւ լուանալ երեսը, մանաւանդ աչքերը, ականջները, քիթը և բերանը. վերջինը պէտք է ողողել մաքուր սառ ջրով ամեն անգամ խմելից յետոյ։ Ջուրը լողացնելու համար չը պէտք է լինի ջերմ, ոչ բարձր 28|°Ռ-ից, կամ այնպիսի, որի ձեռքով շօշափելը ախորժ է։

Երեսը լուանալու համար ջուրը նոյնպէս չը պէտք է լինի ջերմ և ամեն անգամ հարկաւոր է գործածել աւելի ևս հով ջուր։ Այն երեխաների համար, որոնք երեք ամսից անցել են, հարկաւոր է գործ ածել միայն այն ջուրը, որ մնացել է սենեակում մի քանի ժամ։ Անկողինը և շորերը պէտք է շուտ շուտ փոխել, նրանք չը պէտք է լինեն թաց կամ ջերմ, այլ միայն փոքր ինչ տաքացրած։ Երեխաների առողջութեան համար հարկաւորութիւն չը կայ փաթաթել նրանց, պինդ փաթաթելը բոլորովին վնաս է։ Երեխայի հագուստը պէտք է լինի տաք, բայց ոչ հաստ և սաստիկ տաքացնող, մանաւանդ նա չը պէտք է լինի նեղ. շապիկի թևերը չը պէտք է կապել, սենեակում հարկաւոր չէ ծածկել գլուխը և կապել վիզը. զգուշանալ գնտասեղներից. ոչ մի ժամանակ չը պառկացնել երեխային անկողնում հագնված։ Երեխայն զբօսեցնելու ժամանակ կառքում չը պէտք է ամենևին պատել նրան բարձերով, այլ հագնված ծածկել շորով։ Լաւ եղանակի ժամանակ պէտք է երկար մնալ երեխայի հետ խոտակ օդի տակ, բայց զգուշանալ հիւսիսային և արևելեան հողմերից, մանաւանդ աշունքի և գարունքի ժամանակ։

Անկողինը պէտք է բաղկանայ մատրացից (ձիու մազից, ծովային խոտից, յարդից), բարձից դլխի համար և թեթև ծածկոցից Պրուժին ունեցող մատրացներն չը պէտք է լինեն պինդ, հաստ և ծանր, շարունակ գործածելը կաուչուկից սփռոցի վնաս է։ Միայն հիւանդութիւնը և կաթի չը լինելը կարող են ազատել մայրը պարտաւորութիւնից, որ ինքն կերակրէ իր կաթով երեխան։ Մի կամ երկու ամիս այսպէս կերակրելը առաւել ևս օգնում է երեխայի զարգացմանը։ Եթէ երեխան չէ կարող ստանալ կանացի կաթը, սորա տեղը այն ժամանակ կարող է բռնել կովի լաւ կաթը, որը, առանց առաջուց եփ տալու, պէտք է խառնել եփ տուած տաք ջրի և շաքարի հետ։

Մինչև երրորդ ամիսը պէտք է տալ երեխաներին կովի կաթ խառն հաւասար մասի ջրի հետ, յետոյ փոքր առ փոքր սակաւացնել ջրի քանակութիւնը. երրորդ և չորրորդ ամսից յետոյ տալ միայն կաթը։ Սոդը կարելի է տալ միայն բժշկի խորհրդով։ Զը կայ այլ հնարք, որ կարողանար կաթի տեղը բռնել։ Առանց բժշկի խորհրդի չը պէտք է գործածել թանձրացած շվէյցարեան կաթը, Նէսսլէի երեխաների համար ալիւրը, Տիմ պայի փոշին, արօրուտ, սալէպ և այլն։ Ալիւրը կամ կաշկա, սուրճից կամ թէյից խաշուն (отваръ) նոյնքան վնասակար են երեխաների համար, որքան հացը և գետնախնձորը առաջին վեց ամսվայ ընթացքում։ Վեց ամսից յետոյ կարելի է տալ երեխաներին կաթի հետ 2—3 անգամ օրը կաշկա, մաքսովի ալիւր եփ տուած ջրի և կաթի հետ։ Հաց, գետնախնձոր, միս և այլ կերակուրներ թոյլ է տրվում տալ երեխաներին միայն երկրորդ տարվայ ընթացքում։ Երբ երեխան շարունակ լաց է լինում, աւերած է ստամոքսը, անհանգիստ է և քուն չունի, լղարում է կամ զանազան հիւանդութիւններին է ենթարկվում, չը պէտք է այն ժամանակ սահմանափակվել միայն մանկաբարձ կնոջ կամ այլ անձերի խորհուրդներով, այլ ուղղակի դիմել բժշկին։

Վերջացնելով յօդուածը, չենք կարող չը յայտնել այստեղ, որ շատ ցանկալի և շատ օգտաւէտ կը լինէր, եթէ այս խորհուրդներն տպվէին առանձին թերթերով և բաժանվէին գիւղերում քահանաներին, որ նրանք ձրիաբար տային ամեն տանը, որտեղ երեխայ է ծնվում։ Իսկ կարդալ չիմացողների համար քահանաները իրանք կարդային և հասկացնէին ժողովրդին այս խորհուրդների կատարելու մեծ օգուտը։

Բժիշկ Միրիմանեանց

*) «Врачебн. Вѣдом.» 1879 г. № 327.

սահմանափակել են կնոջ գործունէութիւնը և ստրկացրել են նրան մարդութեան մի ուրիշ կէսին, արական սեռին: Կնոջ լիակատար ազատութեան նպաստող միջոցներից գլխաւորն է կնոջ տնտեսական անկախութիւնը տղամարդից. լուսաւորեալ երկրներում կինը լաւ հասկացել է այս հանգամանքը և աշխատում է իրագործել. մեր հասարակութեան մէջ էլ երևում է մի այդպիսի շարժում, ուսուցիչ կանանց թիւը օրէցօր շատանում է, հայ օրիորդը ինքը աշխատում է լայնացնել իր գործունէութեան շրջանը ակնարկելով աւելի մեծ պարապմունքների վրա, քան ընտանեկանը: Աչքի առաջ ունենալով այսպիսի ուրախալի շարժումը, պէտք է աւելի խելացի և կանոնաւոր միջոցներ ձեռնարկել գործի յառաջադիմութեան համար. մինչդեռ քաղաքակրթված երկիրներում կազմվում են ընկերութիւններ, ժողովում են կօնգրէսներ (կանանց կօնգրէսը Փարիզում անցեալ տարի), որոնք մեծ եռանդով յառաջ են տանում կանանց ազատութեան գործը, մեզանում երևում են միայն գործին համակրողների յօդուածները լրագրների մէջ, որոնք, դուցէ, անցնում են առանց մի իրական ներգործութեան հասարակութեան վրա. բայց աւելի նպատակայարմար կը լինէր կազմել մի ընկերութիւն, որը պիտի պատրաստէ պարարտ հող կանանց ազատութեան մեծ գաղափարի համար. նա պիտի տարածէ հասարակութեան մէջ մարդասիրութեան և հաւասարութեան գաղափարներ կանանց վերաբերմամբ. նա պիտի բարձրացնէ կնոջը անկամք և ստրուկ արարածի դրութիւնից մինչև ազատ մարդի աստիճանը. նա պիտի ոչնչացնի ժողովրդի աշխարհայեացքում արմատացած անմիտ և անբարոյական հասկացողութիւնները կանանց վերաբերմամբ:

Վեր առէք մեր այսպէս ասված ժողովրդական բանաստեղծների գրուածքները, նրանց մէջ կը գտնէք կանանց վերաբերմամբ միայն կեղտոտ և անբարոյական խրատներ. մենք դեռ չենք ամաչում հայ օրիորդին պատուել «փտած ապրանք», «քացախած աղջիկ» տիտղոսներովը, նոյն իսկ հայ կինը չը գիտէ որ ինքը կարող է դառնալ իր տիրոջից—տղամարդից ազատ և անկախ. ընկերութիւնը պիտի արմատախիլ անէ այս ամենը. նա պիտի մոցնէ փրկարար և լուսաւոր գաղափարներ ժողովրդի աշխարհայեացքը, նա պիտի աղնուացնէ հասարակութիւնը: Ընկերութիւնը պիտի պատերազմէ ընտանեկան բռնակալութեան դէմ, սիրոյ և ազատութեան գաղափարները տարածելով, նա պիտի անհետացնէ բռնի ամուսնութիւնները:

Ընկերութիւնը նոյնպէս պիտի նպաստէ կանանց կրթութեան գործին, միջոց տայ բարձր կրթութիւն ստանալու հայ օրիորդին. ընկերութիւնը իւր գործը յառաջ կը տանէ գրականութեան և կենդանի խօսքի միջոցով. նա կարող է ունենալ իր օրգանը մինչև անգամ, բայց աւելի լաւ կը լինի, եթէ մեր ամենատարածված լրագիրներից մէկը ընկերութեան գաղափարների արտայայտիչ դառնայ: Այս յօդուածովս ես չէի ուզում տալ մի ամբողջ ծրագիր ընկերութեան, բայց ես հասած կը լինէի իմ նպատակիս, եթէ իմ առաջարկութիւնը ընդունելութիւն և համակրութիւն գտնէր հասարակութեան կողմից. չենք կարծում որ այս ընկերութեան իրագործելը դժուար լինի Թիֆլիսում, որտեղ կենտրոնացած են մեր մտաւորական ուժերը. Թիֆլիսի հասարակութեան մէջ կը գտնվեն գործը սկսելու ընդունակ պարոններ, տիկիններ և օրիորդներ: Երբ կը կազմվի ընկերութեան կենտրոնը, յետոյ գաւառներումն էլ կը հաստատվեն առանձին մասերը. հոգևորականութիւնը նոյնպէս կարող է և պարտաւոր է օգնելու այսպիսի մի մեծ և փրկարար հաստատութեան, խելացի կերպով օգտվելով սրբազան աղբիւրից—աւետարանից, նա կարող է կենդանի խօսքով տարածել աւետարանի մարդասիրական գաղափարները ժողովրդի մէջ:

Իսկը աված է, փառք և պատիւ իրագործողին:

Մոսկվա Ն. Աբէլեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեր ԵՐԵՒԱՆԻ թղթակիցը գրում է մեզ: «Թեմական տեսչի օգնական պ. Պերճ Պռոշեանց հասել է Երևան: Նա երևում է մեզ եռանդ ունեցող մարդ: Տեսնենք ինչպէս կը լինի նրա գործունէութիւնը: Պ. օգնականի ինձ հետ ունեցած մանաւոր խօսակցութիւնից երևեցաւ. որ նա համոզված է, թէ հընարաւոր է 25 կօպէկ դասին վճարելով, հրաւիրել գիմնազիայում կրթութիւն ստացածներին որպէս ուսուցիչներ և այդպիսով հին և նոր բացվելի ուսումնարանները առաջադիմութեան շաւղի վրա դնել:»

—

Մշակի գաւառացի բաժանորդները, որոնք տեղափոխվելով մի տեղից միւս տեղ փոխում են իրանց հասցէն, պէտք է ուղարկեն խմբագրութեանը երկու հատ 8 կօպէկանոց մարկաներ:

—

Մեզ հաղորդում են ՆՈՒԽՈՒՑ, որ այնտեղ ամեն բան սաստիկ թանգ գնով է ծախվում: Աւազախառն ցորենը, որ առաջ պուդը 30 կ. էր ծախվում, այժմ 1 ր. արժէ: Դաշտերը լիքն են մկներով և մորեխով: Մթերքների գները հետզհետէ թանգանում են:

—

Հաստատ աղբիւրներից լսում ենք որ նոյն թատրոնասէր երիտասարդները, որոնք ապրիլ ամսին ամարային թատրոնում տուին մի ներկայացումն յօգուտ Հալլաբարի Ս. Մարիամեան ուսումնարանի, մայիսի 16-ին տալու են երկրորդ ներկայացումն նոյն թատրոնում բարեգործական նպատակով: Խաղացվելու են «Սէր և նախապաշարմունք» կոմեդիա և «Աշնանային երեկոյ» վոդէվիլը:

—

Մայիսի 2-ին ԹԻՖԼԻՍԻ նահանգի ազնուականների ժողովի նիստի մէջ պարոն Սուլխանով կարդաց «Մշակի» այն առաջնորդող յօդուածների բովանդակութեան թարգմանութիւնը, որոնց մէջ յիշված էր թէ վանսիաներ չը կան բարձրագոյն տեխնիկական դպրոցներում բէալական դպրոցների մէջ աւարտածների համար և առաջարկեց որ ազնուականների ժողովը տէրութեանը մի խնդրագիր ներկայացնի, խնդրելով, որ կովկասեան բէալական դպրոցների մէջ աւարտածները բացառապէս ընդունվեն համալսարանների ֆիզիկո-մաթեմատիկական և բժշկական ֆակուլտէտները: Ազնուականների ժողովը ընդունեց պ. Սուլխանովի առաջարկութիւնը և վճռեց այդ մասին խնդրագիր ներկայացնել բարձրագոյն իշխանութեանը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՆԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՄԷՋ ՊԱՏԱՀԱԾ ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

Հոկտեմբեր 15. Շատախու Կաճէտ և Խամուր գիւղերը Արտօշցի քիւրդերէն կողոպտուեցան և Խամուրի գիւղի տ. Յակոբ քահանան և իւր որդին ալ սրունքէն կարիվէր վիրաւորուեցան, գիւղացիք տեղոյն դայմագամին (կառավարիչ) բողոքեցին, բայց ոչինչ շահեցան:

Հոկտեմբեր 20. Կուաւանցի Քօչար քիւրդեր Շատախու Գաղպին հայաբնակ գիւղին վրայ յարձակվեցան և մի քանի տուներ կողոպտեցին. ու տ. Գասպար քահանան ալ չարաչար ծեծեցին:

Հոկտեմբեր 20. Սղդայու Ռէսի սայլը քիւրդերը կտրատելով 100 դահեկանի արժէք ունեցող անիները տարան:

Հոկտեմբեր 26. Շատխու Ահմատ Աղա անուն քիւրդ գլխաւորի ձեռամբ, նոյն կողմի բոլոր գիւղերը քանդուեցան. Թշուառ հայերը գաղթեցին, Խումար գիւղէն 12 տուն քանդեցին, 200 տունէ բաղկացող Կաճետի գիւղը 2—3 տուն մնացին:

Հոկտեմբեր 30. Նօրտուզ, Փիսպատանայ Ստեփանի և իւր եղբօր խոտի դէզերը այրուեցան քիւրդ Եաղկուայ Աղայի եղբօր ձեռամբ:

Նոյեմբեր 2. Արտամետի մէջը գիշերուան վերջին պահու տաճիկ մը Վէրդօ անուն հայու մը դէզ կրակի տվաւ, որ բռնկելով ամբողջ տունը վառելու կը սպառնար, եթէ վերջապէս չը հանէին ու չը մարեցնէին գիւղացիք, որք եկեղեցին երթալով կը տեսնան:

Նոյեմբեր 5. Կավտան, Կանկավառ գիւղի Ռէս Բարսեղին, Թամջին և Պետրոսին խոտի 7 դէզեր այրուեցան մահմատայ իրանցի Զաքանկի մանչ Շէյխ Դամուրի ձեռամբ, պատճառ որ Ռէս Բարսեղի ոչխարներ գողցեր էր և Բարսեղ վրան բողոքելով ապացուցած էր:

Նոյն օրը. Խավշանցի քիւրդեր Հայոց—ձորը Կղլտաշ անուն գիւղէն 1800 հատ ոչխար յափշտակելով տարան. գիւղացիք կառավարութեան բողոքեցին սակայն ոչինչ շահեցան. յետոյ Կէօրանտաղտայ Շէյխու միջոցաւ 1000 ոչխար յաջողեցան ետ դարձունել, սակայն հիմայ ալ Շէյխը այնչափ բան կը պահանջէ գիւղացիներէն, անանկ որ գիւղացիք 1000 ոչխարն ալ տան տակաւին չը պիտի կրնան գոհացնել զայն: Նոյնպէս ալ Խոսպ գիւղէն 20 եզ յափշտակեցին յիշեալ քիւրդերը:

Նոյեմբեր 5. Խավշանցի քիւրդեր Խոսպ գիւղէն 20 եզ յափշտակեցին: (Նախորդ երես գրուած է):

Նոյեմբեր 8. Արճէշու մէջէն զօրքերը հայ աղջիկ մը առևանդելով լկելէ վերջը Թշուառ աղջիկն կրօնափոխ ըլլալու ստիպեցին, և որ Վան բերուելով Առաջնորդարանի միջոցաւ հաղիւ հաղ ազատեցաւ:

Նոյեմբեր 11. Արտամետցի Ասլօիան Յովհան քաղաքէն գիւղը վերադարձած միջոցին ճանապարհին հեղեղատի մը քով ճանկօ անուն Արտամետցի տաճիկ մը իր հետն առած տաճիկ մը և Պալանկազի Իպրահիմ անուն զօրք մը նորա վրայ կը յարձակին և մահու չափ ծեծելով ու թև թիկունք կոտրտելով գետին կը փռեն զայն. մինչև որ վերջէն գիւղացիք իմանալով կերթան և Յովհանը վերցուցեալով գիւղը կը տանին:

Նոյեմբեր 15. Եզտինանցի Քօչար Նամաթ, Նօրտուզի մի քանի գիւղեր գալով բռնի ոչխար ժողովեց, դէմ դրողները չարաչար ծեծելով և բոլոր գիւղը թալանելով:

Նոյն օրը. Բերկրիի Քարծօթ գիւղը կիջնան քանի մը զօրքեր և կօթեանեն Ռէսի տունը, գիշերանց Ռէսի երկու աղջիկները առևանդելու կելլեն, երբ Ռէսը կիմանայ դէմ կը դնէ զօրաց, որք կը փութան Ռէսը մահամերձ վիրաւորել. գիւղացիք իրողութիւնը իմանալով ամբողջապէս կը գան և հաղիւ հաղ կրնան Ռէսը և աղջիկները ազատել:

Նոյեմբեր 19. Եզտինանցի Քօչար Նամաթ Հայոց—Ձորը գալով գիւղացիներէն բռնութեամբ 50 չափ ցորեն տարաւ:

Նոյն օրը. Կառավարութիւնը Պալդալիի մէջն ալ սկսաւ տուրքի փոխարէն թղթադրամ չառնել, այլ ողջ ստակ պահանջել, որ թղթադրամի քառապատիկէն աւելի է. սոյն որոշումը արդէն ուրիշ շատ մը գաւառներու մէջն ալ գործադրած է:

Նոյեմբեր. 25. Մուշի կողմերէն քիւրդերը 5 օրիորդները յափշտակելով զայն իրենց կըրից գործածելէն ետքը կուզին կրօնափոխ ընել, (յափշտակեալ օրիորդներէն մինը 12 տարեկան ջուրի գնացած ատեն կը յափշտակուի, մինն ալ նոյնչափ հասակաւ պէր գնացած ատեն, իսկ միւս երեքն ալ անծանօթ միջոցներով.) Մուշը՝ հայերէն դիմադրութիւն լինելուն համար Վան խրկեց տեղոյն կառավարութիւնը. ճանապարհին 12 տարեկան աղջիկներէն մինը կրկին անյայտացաւ: Վանայ մէջը թշուառ օրիորդները գաղտնի լուր խրկեցին առաջնորդարանը թէ «փ սէր Աստուծոյ զմեզ ազատեցէք», վասն զի Մուշի մէջ քրդաց տուած սպառնալիքներէն վախցած, որ ասած էին «ձեր տունը տեղը բոլոր պարագայիւք կը վառենք, կը քանդինք եթէ չասէք թէ ինքնայորդոր Շէյխերու տունը գնացինք տաճկանալու համար» ասած էին «մենք կը տաճկանանք»: Դեր. Առաջնորդը երբ կուսակալին բողոքեց խստիւ, թէ «Հայոց ամեն չարիք հասցնելէ վերջը սկսեցին տաճկացնել ալ», կուսակալն գիրքը փոխեց ասելով թէ «այս բանին ես չեմ խառնուիր, դարձեալ Մուշ կը խրկիմ, հոն թող վճռեն». ասանկով խօսքը վերջացոյց. կրկին Մուշ դարձեալ որոշեց որպէս զի հոն աւելի դիւրութիւն լինի դարձեալ տաճկացնելու:

Նոյեմբեր 26. Խավշկանի Քիւրդերը Շատխու Կաճետ գիւղէն մի հայ ևս սպաննեցին զի դիմացած էր եղեր իւր ոչխար յափշտակող քիւրդերուն:

Նոյեմբեր 27. Խիզանու Եզանց գիւղը Մ. Մուրատ անուն հայու մը գլուխը քիւրդերը մամուլ դնելով ճզմեցին չարաչար և մեռուցին:

Նոյեմբեր 30. Թիմարի Գոմ և Ատիգեօղալ գիւղերը Բայազետի գաղթական տաճիկները 7 տեղ ալ այրեցին:

Նոյն օրը. Մամատ Պիրանցի քիւրդերը քաղաքէս մի ժամ հեռու եղող Կուռուպաշ գիւղէն 100-ի չափ ոչխար յափշտակելով տարան:

Դեկտեմբեր 2. Մի քանի որբերու տէր այրի կին մը իւր որդւոց ուտելիք հայթայթելու համար Աւանց գիւղը գնացած ատեն որ քաղաքէս ½ ժամ հեռու է, ճամբան հարիւրապետի մը կը հանդիպի որ խեղճ կինը իրեն հետ տանել կուզէ, կինը դիմանալուն համար մի քանի սուլինի հարուածները ընդունելէ վերջը կաղաղակէ. «Թէ ես որբոց տէր իմ գիս մի սպաններ» սոյն աղաղակը գիւղացիքը ու նաև Արճէշի տ. Սողոմոն քահանայի որդինը՝ որ Նոյն ճամբու վրայ կը գտնուէր՝ լսելով կը վազին և հաղիւ հաղ կարող կըլլան կինը հարիւրապետի ձեռքէն ազատել:

Դեկտեմբեր. 4. Հինդիստան և Նոր-Գիւղ գիւղերու մէջ տեղը քիւրդեր սպաննեցին Հինտիստանցի մի հայ, որ Խէք գիւղի Կիւլօ անուն հայու մը փեսան էր, վիզը կտրած մինչև կաշին, և մի թևն ալ ջարդուած վրայ կախուած գտնուեցաւ սպանելոյն մարմինը:

Դեկտեմբերի 5. Հայկավանք թաղը երկաթ ծախող Յակոբի տունը մտան գիշերանց և 2000 ղուրուշի ապրանք յափշտակեցին:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Իզմիր, 15 ապրիլի

Դեռ գիտենալով թէ ներկայումս ամեն հայի համար հաւասարապէս հետաքրքրական է տեղեկութիւններ ստանալ Հայաստանի հայոց վիճակին և կատարած գործառնութեանց վրա, կ[illegible] փութամ ահա ներկայացնել ձեզ կարնոյ ազգայնոց վիճակը, խնդրելով որ դուք ևս բարեհաճեք ձեր պատուական թերթին միջոցաւ մատուցանել սիրելի ազգիս:

Իրաւ է որ Կարինը համեմատելով իւր աշխարհագրական, քաղաքական, զինուորական և վաճառականական նշանակութեան հետ, հեռաւորաց համար բաւական մեծ և կարևոր անուն մը ունի և պէտք է որ ունենայ Հայաստանի գրեթէ տաճկական Ասիոյ գլխաւոր քաղաքաշարքումն. սակայն իւր բարոյական արժէքը ստորին է շատ մը փոքր քաղաքներէն իսկ. հետեւելով մասնաւորապէս Վանայ, Երզնկայի, Բրաբկիրու և այլնի հետ: Եւ այս բարոյական ստորութիւնը յատուկ է նորա մէջ բնակեալ ամեն հասարակութեանց: Թողնելով մահմետական ժողովուրդը՝ որ ամեն տեղ յետադիմութեան տիպար կը ներկայացնէ և յոյները որք 80—100

տան չափ են, և համարեա կարևոր դիրք մը չեն բռներ այստեղ, զի ամենքն ալ նորեկ գաղթականներ են։ Մեր հայքն ևս գրեթէ վիճակի մեծ տարբերութիւն մը չունին այս նկատմամբ։ Հողվմական և բողոքական հայք այնքան սակաւաթիւ են, որ վրանին առանձնապէս խօսելու մի որ և է հանգամանք մի չեն ընծայեր. հետևաբար Կարնոյ մէջ քրիստոնէական ամենէն կարևոր և գլխաւոր տարրը կը կազմեն լուսաւորչական հայք թուով իբր 2000—2500 տուն միայն քաղաքին մէջ, իսկ կրկնապատիկը գրեթէ Կարնոյ դաշտին, և այլ քանի մը տեղեր։ Դիւղացիք առհասարակ կապրեն մշակութեամբ թէ իրենց սեփական հողերով և թէ հողատերց հետ ընկերակցութեամբ. կան շատեր ալ որ կը զբաղին հիւսնութեամբ և երկաթագործութեամբ. իսկ քաղաքին մէջ կան մեծագումար դրամատէրներ, կալուածատէրներ, հողատէրներ, հարուստ վաճառականներ, ժիր և ճարտար արհեստաւորներ. վաճառականաց մէջ կան շատերը որ ուղղակի յարաբերութիւն ունեն Եւրոպայի վաճառականական կեդրոններու հետ ինչպէս են Վիէննա, Մարսելիա, Թրիեստ, Լոնտրա, Կ. Պոլիս. և արհեստաւորաց մէջն կան որ բաւական նշանաւոր ճարտարութեան փորձեր ցոյց կուտան, հրազինաց, հիւսուածոց, կիտուածոց և այլ շէնքերու մէջ. մէկ խօսքով անաչառ դիտողի մը նախանձելի կերևի Կարնոյ հայոց նիւթական վիճակը. և այս իսկ է պատճառ, որ ամեն տեղէ խումբ խումբ անհատներ և ընտանիքներ դիմած են և կը դիմեն այստեղ բաղդ փնտռելու։ Սակայն գալով բարոյականին և մտաւորականին բոլորովին խանգարեալ, անկարգև գրեթէ յուսահատական է։ Շրջակայ գիւղօրէից և ոչ մէկն չունի դպրոց, որոց վիճակը ըստ բաւականին կը դարմանուէր եթէ ս. առաջնորդ բարեհաճէր տարին 10 հատ անպիտաններու տեղ 5 արժանաւոր և պիտանի անձինք ձեռնադրել քահանայ։ Թոռ զգիւղերն քաղաքին վիճակն ալ այս մասին շատ ողորմելի է. կայ մի եկեղեցի յանձնուած ի բաց առնեալ մէկ երկուքն խպտա տգէտ և անկարգ քահանայից ձեռք, որոց համար բնաւ նշանակութիւն չունի իրենց կոչումն. մէջերնին կան որ հազար ու մէկ բարոյական բիծեր ունին, եւ կան ալ որ գինիէն տարուելով անուշ և անխել ամբողջ գիշերներ անսուրբ նեղուցներու մէջ կանցնին. սակայն առաջնոց յանցանքները կը քաւուին առաջնորդարանի տուրքերն պտղին և կողոպուտն ամենայն հաւատարմութեամբ և ժրաջանութեամբ հաւաքելով. և երկրորդացն իրենց սրտաց պաշտօնի գլուխ գտնուելուն կը բաշխուի։ Եկեղեցոյ բակում կայ մի մայր վարժարան որոյ մէջ կը գտնուին մերձ 600 ուսանողք արական սեռէն, որոց կաւանդուին հայկաբանութիւն, ազգ. պատմութիւն, կրօնագիտութիւն, գաղղիերէն և տաճկերէն լեզու, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, անասնական կազմագիտութեան, գծագրութեան, երաժշտութեան և այլ շատ մը ուրեթեանց դասեր։ Այնչափ ուսանողք և այսչափ առարկայք կը բաւականան և կրնամ ըսել թէ կը շատանան իսկ 7—8 պաշտօնեայներով ի մէջ առեալ և կառավարիչներն ու մանկավարժները. աւելորդ չեմ համարիր յիշել նաև թէ սոյն դպրոցը երկու շրջան ունի, մին ծաղկոց, զոր տեղս հորթանոց կանուանեն, որոյ վարիչներն ևս ի հարկէ նախորդներ կամ հորթարածներ լինելու են. իսկ միւսն ուսումնապահ, որոյ գլխաւոր դասատուն է մի ուրթսունամեայ պառաւ մարդ՝ ականջները խուլ, սակայն երեսնամեայ մի աշխատաւոր և առաջնորդի ամենահլու գործիք մանաւանդ թէ քիչ ամսականով գոհացող. մի ուրիշ հինաւուրց պաշտօնեայ ալ թէև ամենայիմար և ամենատգէտ մի մարդ, սակայն մի փոքր ինչ գեղեցիկ գիր ունենալով առաջնորդարանին և թաղական խորհրդոյ համար պատրաստական և ձրի գրագիր է. հոգ չէ թէ դպրոցին մէջ ալ ժամանակին մեծ մասը խնդրագրեր և այլ թղթեր գրելով կանցունէ. դպրոցիս բարեկարգ վիճակն և յառաջադիմութիւնը լաւապէս բացատրելու համար պատշաճ կը համարիմ ասել թէ 10—12 տարուան կը մօտենայ որ գրեթէ բնաւ հրապարակային քննութիւն մը տեղի ունեցած չէ, որոյ հինգ տարին ես անձամբ գիտեմ. առարկուելով թէ ժամավաճառութիւն է, թէև հասարակ տոներու առթիւ շաբաթներով արձակուրդները սովորական են։ Ամեն այցելու որ առաջին անգամ ներս կը մտնէ դպրոցին դռնէն և կը տեսնէ այնքան ուսանողաց մեղուական բղբղոցը, սիրտ ի խինդ կը ցնծայ, բայց քիչ մը վերջ տխուր երևոյթները սև քօղ մը կը քաշեն իւր բերկրանաց առաջ. և արտասուիլ կը սկսի. փոքր ինչ զգացում ունեցող, ոչ մի կարնեցին չի կրնար մոռնալ այն խօսքերը՝ զոր արտասանեց Աղաբէգեան Մ. էֆ. ասկէ 3 տարի յառաջ դպրոցներուն այցելելիս, երբ իրեն հարցուեցաւ ինչպէս գրատաք մեր դպրոցը համեմատութեամբ Պոլսոյ վարժարանաց. «ա՜խ, սրբազան, ասաց նա, մինչ Կ. Պոլիս էի ստէպ կը կարդայի ժիր հեռագիրներն ու նամակները առ պատրիարքն. թէ այս ինչ քիւրդը հայ մը սպաննեց, այն ինչ թիւրքը տուն մը աւրեց և այլն. և կը ցաւէին սաստիկ, իսկ այսօր մոռցայ զանոնք, և աղիներս կը կտրտուին, երբ կը տեսնեմ որ դուք տարին 600 մանկունք մեկէն բարոյապէս մեռցնելու անգթութիւն ունիք»։ Այս ասաց ազգասէր ոգին և տղայի պէս փղձկալով լացեց մեծ բազմութեան մը առաջ. նոյնը պատահեց գրեթէ և այս օրերս Աբարկերու նոր առաջնորդ գեր. Եղնիկ վարդապետին։ Սոյն յարկէն քանի մը քայլ հեռու և եկեղեցւոյ շրջանակէն դուրսն է աղջկանց դպրոցը. մի հոյակապ շէնք, որ ս. Կարապետի վանուց սեփականութիւն էր. սակայն զոր Խրիմեան հայրիկը իւր վանահայրութեան օրով նուիրեց Կարնոյ ազգայնոց այս սուրբ նպատակին։ Այս տեղ ալ կան մօտ 300—400 ուսանող աղջկունք որք կուսանին հայերէն լեզու, ազգ. պատմութիւն, ասեղնագործութիւն. երբեմն ունէին նաև գծագրութիւն։ Այս ալ երկու շրջան ունի. նախակրթարան և ուսումնարան, որք կը գտնուին Արծնեան տ. Գրիգոր քահանայի ուղղակի տեսչութեան և խնամոց տակ, որ միանգամայն և հայերէնի ու ազգ. պատմութեան դասատուն է ուսումնարանի բոլոր ուսանողացն. նախակրթարանին և ասեղնագործութեան համար ալ կան 3—4 հատ վարժուհիներ, որք իրենց պաշտօնին նախնական պահանջմանց վրա իսկ գաղափար չունին։ Արդէն իրենք գեհենիկ ծնողաց զաւակներ, որք ժամանակաւ հասարակ ընթերցանութիւն մը սորված են տուներ պառաւներու մօտ. իսկ ասեղնագործութեան համար մի սուղ միջոց յաճախեր են տեղւոյս գթութեան քոյրերուն դպրոցը ի հարկին ապրուստ մը ճարելու համար քանի մը ձեռագործ սորվելու։ Դպրոցիս տեսուչը դպրոցական արդէն անտանելի բեռան հետ ունենալով իր վրա նաև քահանայական պաշտօնն և տնտեսական կամ վանօրէից խորհրդոց անդամակցութիւն օրուան ժամերուն մեծագոյն մասն կանցունէ եկեղեցին և աստ անդ. իսկ շաբաթուան մեծ բաժինն վանքերուն այցելութեամբ, այնպէս որ ուսանողաց մէջ կը գտնուին շատեր որք ամբողջ շաբաթուան մէջ մէկ դաս առնելու իսկ չեն ժամաներ. իսկ վարժուհեաց դաստիարական ուղղութիւն ու մանկավարժական հրաշալի մեթոդն են պառաւական անէծք և օրհնեալ գաւազան. մանաւանդ տեսչին բացակայութեան միջոցին։

Սոյն երկու կեդրոնական դպրոցներէն զատ կան նաև քանի մը թաղային երկսեռ վարժոցներ, ճիշդ նոյն ուղղութեամբ և նոյն վիճակաւ։ Շատ անգամ փորձեր եղած են սոյն անպատիւ կեցութենէն այս դպրոցները հանելու մի հնար գտնալ. սակայն չը գիտեմ փորձողաց կամաց թուլութենէն եթէ ոչ խոշնդոտներու զօրաւորութենէն և արգելանաց ծանրութենէն ամեն փորձն ի զուր գնացին, և ամեն ջանքն ապարդիւն եղած է. այնպէս որ շատերը իրենց որդոց գոնէ բարոյականը անաղարտ պահելու համար, դպրոց չեն ղրկիր բնաւ և կամ հետերնին շուկայն կը տանին և քիչ շատ բանագէտ երիտասարդներէն կը խնդրեն որ գան և դաս տան անոնց։ Իսկ գանգատաւորաց ուրիշ մի խումբ մըն ալ ընդհանրապէս կարողութեան տէր մարդիկ 25—30-ի չափ յուսահատեալ կը միանան և ասկէ հինգ տարի առաջ կը հիմնեն մի ընկերական դպրոց միայն իրենց որդւոց համար, զոր յառաջադիմութեան շաւղին մէջ դնելու համար կը դիմեն Կ. Պոլիս և այլուր. կը գտնեն բաւական ձեռնհաս պաշտօնեայներ և այսօր բաւական կանոնաւոր և յուսալից կերպով յառաջ կը տանին իրենց գործը, որոյ յաջողութիւնը անշուշտ կախում ունի իրենց մինչև ցարդ ցոյց տուած հաստատամտութեան, զոհաբերութեանց և անձանձիր աշխատութեանց շարունակութեամբ, և ես հաւատքով կասեմ որ եթէ իրենց որդւոց վերաբերութեամբ ցոյց տուած միութեան և յարատևութեան ոգին եթէ ընդհանրական դպրոցաց համար ևս չը խնայեն, անոնց գործն ալ մեծամեծ յաջողութիւններ պիտի գտնէ. նա մանաւանդ որ իրենց բեռն ալ պիտի թեթևնայ շատ. զի իրենք 50—60 ուսանողի համար կը ծախսեն տարեկան 350 ոսկի, մինչդեռ միւս ընդհանուրին կը ծախսուի տարեկան միայն 400 ոսկի. չը նայելով թէ ազգիս կալուածական և ուրիշ ուղղակի կամ անուղղակի եկամուտները կը հասնին 1000 ոսկւոյ գումարի մը. գումար մը որ յոռի մատակարարութեամբ մը կ'ոչնչանայ. մինչդեռ կարող է հրաշքներ գործել։ Նոր դպրոցի մը շինութեան համար կը ծախսուի 1500 ոսկի, որոյ տարեկան տոկոսի $^1/_{10}$ ով կարելի էր անկէ շատ փառաւոր և ընդարձակ շէնք մը վարձել։ Դպրոցական բարեկարգութեանց խնդիրը այս օրեր աւելի բուռն կերպով գրգռած է տեղւոյս երիտասարդութիւնը և գրաւած նորա ուշադրութիւնը, որոյ մէջ մեծ դեր չը խաղայ մանաւորապէս թատերական ընկերութիւնը, որ բազմաթիւ ստորագրութեամբ դիմելով գեր. առաջնորդին, խնդրեց գաւառական երեսփոխանական ժողովն ի նիստ հրաւիրել և նորա ուշադրութեան յանձնել ժողովրդեան բաղձանքն ու իրենց խնդիրքը։ Ժողովը գումարեցաւ, իր մէջէն և դուրսէն ձեռնհաս մարդոցմէ յանձնաժողով մը կազմեց, որ դպրոցաց վիճակը քննելով՝ այս խնդիրը իւր խորհրդածութեան նիւթ ընելով իմաստասիրէ և ժողովրդեան բաղձանքն ու ժամանակին պահանջն կատարելու մի ազդու և գործադրելի միջոց խորհի. խղճի մտօք և ամենայն անկեղծութիւն յանձնաժողովը կատարեց իւր պաշտօնը և յատուկ տեղեկագրով մը ներկայացուց երեսփոխանական ժողովոյ դպրոցաց ողորմելի վիճակն, խնդրելով որ անմիջական դարման մը տարուի։ Սակայն նոյն շաբաթուան կիւրակի օր ս. Կարապետու ամբաստանեալ վանահայր Ամբրէ եպիսկոպոսը, որ տեղս եկած էր քանի մը օրուան դատուելու համար Կ. Պոլիս երթալու, եկեղեցոյ բեմէն ազդակոչեց այս տեսակ խնդիրներ յարուցանող խումբերն և քաղաքական խռովարար՝ լոյս և յառաջդիմութիւնը պահանջող երիտասարդութիւնը. սակայն չը կրցաւ իւր նպատակին հասնել, որ էր այսու եպիսկոպոսին աչքը մտնել և նորա պաշտպանութիւնը բերել իւր վրայ Կ. Պոլիս. բայց ընդհակառակն ամէն կողմանէ յարձակումներ կրեց եւ անարգանք լսեց. և մինչև իսկ տեղւոյս քաղաքական ժողով հաւանութեամբ առաջնորդին գրեցին Կ. Պոլսոյ վարչութեան անարգանքներ տեղալով Ամբրէին վրայ։

Այո, ասոնք են, ազնիւ խմբագիր, Կարնոյ ազգային կենաց գլխաւոր կէտեր. որոց վրայ յուսալի է օրէցօր լուսոյ ճաճանչներ տեսնել եթէ Ամբրէին պէս խաւարի որդիներ չը բծաւորեն զանոնք. ոչ նուազ գովելի են նաև տեղւոյս թատերական ընկերութեան յարատև ջանքերը, տաճիկ կառավարութեան Հայաստան ընթացից դէմ. նոյնպէս վերը յիշածս ընկերական դպրոցին չափահաս ուսանողներէն քանիները հաստատած են ուսումնասիրաց ընկերութիւն մը, որ կիրակնօրեայ դպրոց մը հիմներ է այն աղքատիկ տղայոց համար որ չքաւորութեան պատճառաւ ստիպուած են ոգիպահեկ մը ճարելու համար արհեստի երթալ. և այսօր ունի իր մէջ 30—40 ի չափ ուսանողներ, որոց կաւանդուին մեծաւ անձնուիրութեամբ ամենէն գործնական ուսմունքներ. և ամէն կիւրակէ այլ և այլ առարկայից վրայ ալ մէկ երկու ժամ բանախօսութիւնք կըլլան։ Տեղւոյս քաղաքային վիճակը առհասարակ հանգիստ է. թիւրքերուն մէջ խոր լռութիւն մը կը տիրէ և միշտ քննող դրից մէջ են. և այս լռութեան պայթումն ու դրից փոփոխումն շատ սպառնալի կերևի քրիստոնէից, որոց մէջ նոյնպէս օր ըստ օրէ կաղդուանայ այն լուրն ու յոյսն թէ ռուսները գալու են. թէ պ. Կամսարականին գալուստն կարապետն է անոնց. և երբէք չեն կարող հաւատալ թէ իրենց այս հաւատքն ու յոյսը պարապ պիտի ելնէ։ Շատ տխուր աղդեցութիւն ըրաւ տեղւոյս համայն քրիստոնէից վրայ ռուսաց Վեհափառ Կայսեր զարնուիլը. սակայն Նորին Վեհափառութեան առողջութեան լուրին վրա հանդիսաւոր պատարագ մատուցուեցաւ հայոց եկեղեցին, որուն ներկայ էր մի մեծ բազմութիւն, որ միաձայն մաղթանքներ յղեց երկինք «վասն ազատութեան ի վերահաս վտանգէն և տևականութեան անդին կենացն Աղէքսանդր Բ. Կայսերն Ռուսիոյ»։ Այս տարի հունձքերը շատ են, սակայն անձրևներու սակաւութենէն կը վախցուի։

Դիսակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Արտասահմանում հրատարակվող մի քանի լրագիրներ հաւատացնում են, որ կոմս Շուվալով այն դիտաւորութեամբ է գնացել Վիէննա, որ աշխատէ փոփոխել տալ Բերլինի դաշնագրի այն յօդուածը, որ վերաբերում է Արևելեան Ռումելիայի ռուսաց զօրքերից մաքրելուն։ Լրագիրները աւելացնում են, որ կոմս Շուվալովին աջողվեցաւ կատարել իր յանձնարարութիւնը և այնուհետև նա ուղևորվեցաւ Լօնդոն։

—Սէգէդինից հաղորդում են զանազան լրագիրներին, որ այնտեղ մի սարսափելի ուրագան է բարձրացել, որը կործանել է երկաթուղու վերանորոգութեան բոլոր աշխատութիւնները. աշխատութեան նիւթերով և զանազան գործիքներով բեռնաւորված բազմաթիւ նաւեր ջրի տակը ընկղմեցան։ Ուրագանը կատաղի մոլեգնութեամբ քանդեց գետի շուրջը գտնվող պատնէշը, ահագին յորդութեամբ վազելով շրջապատեց ճանապարհի այն կտորը, որի վրա աշխատում էին հազարաւոր մշակներ. այդ խեղճերի բոլորի կեանքն էլ մահուան վտանգի տակ է։ Տեղական վարչութիւնը բոլոր կարելի եղած միջոցները գործ դրեց խեղճ զոհերին ազատելու, բայց դժբաղդաբար յաջողութեան մասին յոյս չէ կարելի ունենալ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼԻՎԱԴԻԱ, 4 մայիսի։ Իշխան Բատտենբէրգ ներկայացնելով Թագաւոր Կայսրին բոլգարական պատգամաւորութիւնը, ասեց. «Ընդունելով բոլգարական ազգի ներկայացուցիչներից իմ ընտրութեան վկայագիրը, իմ առաջին և սուրբ պարտաւորութիւն եմ համարում, բոլգարական պատգամաւորութեան գագաթին կանգնած, մատուցանել Ձեր Մեծութեանը, որպէս մեր ազգի ազատողին, մեր շնորհակալութիւնը։» Բոլգարական պատգամաւորութիւնը հրաւիրվեցաւ ճաշկերոյթին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մայիսի։ «Правит. Вѣстн.» տպել է Օրէնբուրգի գեներալ—նահանգապետի հեռագիրը ներքին գործերի մինիստր Մակովին, մայիսի 5-ից։ «Մայիսի 4-ին ամենասաստիկ փոթորկի ժամանակ հրդեհը նորոգվեցաւ Նիժնեուրալսկում։ Այրվեց պետական գանձատունը, Մետրիասօվեան հրաշէջ բաժինը և շատ ուրիշ շէնքեր։ Դրժբաղդութիւնը մեծ է։ Գանձարանի փողերը և թղթերը փրկվեցան։ Հրամայեցէք նշանակել դրամական օժանդակութիւն հրդեհից վնասվածների համար։ Վաղը ինքս անձամբ ուղևորվելու եմ դէպի Ուրալսկ։ Այսօր կրկնվեց մեծ հրդեհ Օրէնբուրգի մէջ. այրվեցաւ նոր արուարձանի այն մասը, որ անվնաս էր մնացել նախկին հրդեհի ժամանակ։ Կրակը անցաւ դէպի երկաթուղին և այս րոպէիս այրվում է կայարանի մօտ պահեստի դրած փայտը։

ԻՐԲԻՏ, 5 մայիսի։ Ամեն բան բարեյաջող դրութեան մէջ է։ Բնակիչները հանգստացան։

ԼԻՎԱԴԻԱ, 6 մայիսի։ Բոլգարեան իշխանը մայիսի 5-ին շոգենաւի վրա նստելով ուղևորվեց դէպի Օդէսա։ Նրա գնալուց առաջ պալատական եկեղեցու մէջ կատարվեցան մաղթանքներ, Կայսրի, Կայսրուհու, Բոլգարեան իշխանի և բոլգարական պատգամաւորութեան ներկայութեամբ։ Մաղթանքների մէջ յիշվեցան Բոլգարեան իշխանի, զօրքի և բոլգարական ազգի երկարակեցութիւնները։

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներկայ 1879 թուի յուլիսի սկզբից, տէրութեան թոյլտուութեամբ, Թիֆլիսի մէջ հրատարակվելու է ռուս «Кавказъ» լրագրի չափով, քաղաքական—գրականական շաբաթաթերթ «Ճշխատանք» ռուս և հայ լեզուներով հետևեալ պրոգրամմով:

1) Պատասխանական ժամանակագրութիւն.

2) Տեղական կեանքի ուսումնասիրութիւն. թէ տնտեսական, թէ վիճակագրական ու թէ գիւղատնտեսական կողմերից:

3) Գրականութիւն. գիտութիւնների բոլոր ճիւղերի վերաբերութեամբ աշխատութիւններ. լինեն նրանք թարգմանութիւններ թէ ինքնուրոյնութիւններ: Քննադատութիւն ռուս, հայ և օտարազգի գրականութիւնների:

4) Քաղաքականութիւն. քաղաքական հայեացք և յօդուածներ միջազգային իրաւունքի հարցերի նկատմամբ:

5) Մանր լուրեր:

6) Մամանաւոր յայտարարութիւններ:

«Ճշխատանք» շաբաթաթերթի տարեկան բաժանորդագինը, Թիֆլիսում, առանց տուն հասցնելու . . . . . 5 բուբլ.

Տուն հասցնելով . . . . . 5 ր. 50 կ.

Ռուսիոյ զանազան քաղաքներ ղրկելով . . . . . 6 բուբլ:

Փոստային դաշնակցութեամբ ղրկելով արտասահման . . . . . 7 բուբլ:

Ստորագրութիւնն ընդունվում է Թիֆլիս Կենտրոնական գրավաճառանոցում:

«Ճշխատանքի» համար բոլոր նշանակելի նամակագրութիւնները, ինչպէս նաև գահանջները, օտարաքաղաքացիք պիտի բարեհաճեն մինչև ուրիշ նոր յայտարարութիւն դուրս գալը ուղարկել ուղղակի «Ճշխատանք» լրագրի խմբագրին այս հասցէով. Григорію Тер-Меликсетову, редактору газеты „Трудъ“, въ Сололакахъ, на Сололакской ул. у Вознесенской церкви возлѣ стараго моста въ Д. Михаила Галустова подъ № 110.

Նիւթեր և անմշակ յօդուածներ «Ճշխատանքի» խմբագրութիւնը ընդունում է մի միայն և յատկապէս ռուս, հայ, ֆրանսիական և վրացական լեզուներով:

Խմբագիր-հրատարակող Գրիգոր Տէր-Մելքիսեդեկեան:

Երևանեան հրապարակի վրա ԹԱՄԱՄՇԵՎԻ կարավանսարայի դէմ ուղիմը № 11. տան վերի յարկում վարձով տրվում է մէկ ԴԱՀԼԻՃ ծառայով, լաւ կարասիքով և առաւօտ-երեկոյ սամովարով. դահլիճը մի բալկօն ունի իր առաջ: Գինն է ամսական 40 բուբլ: Բացի դահլիճը մի և նոյն տանը վարձով տրվում են նոյնպէս առանձին ՍԵՆԵԱԿՆԵՐ կարասիքով, ծառայով, սամովարով և լուսաւորութիւնով. այդ սենեակները ամսական արժէն 25, 20 և 15 բուբլ: Այդ սենեակներում կարելի է նոյնպէս ընկերով բնակվել: Հարցնել մի և նոյն տան դրան առաջ միրգ ծախող ՅԱԿՈՎԲԻՆ:

ՄԻԲԱՅԻԼԵՆ ԿԱՄՈՒՐՋԻ մօտ Զուբալովի տան մէջ գտնված **Ն. Ա. ԴՕՄԱՐԱՑԿՈՒ «ՊԱՐՏԱՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ** դրաւով և պարտամուրհակով **ՓՈՂ** է տալիս, գընում է առևտրական **ՊԱՐՏԱԹՂԹԵՐ**, ծախում է ներքին փոխառութեան **ՏՈՄՍԱԿՆԵՐ** վճարը մաս մաս ստանալով, կատարում է զանազան **ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ**:

Մի և նոյն տեղը գտնվում է «**ԽՈՐՀՐԴԱԿՑԵԼՈՒ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ**,» որտեղ կարելի է տեղեկութիւններ ստանալ **ՔԱՂԱՔԱՑԻՆ ՔՐԻՍՏՈՆԸ** և **ԱՌԵՎՏՐԱԿԱՆ** գործերի մասին: Գրասենեակը ընդունում է քաղաքային գործերի կատարումն իր ծախսերով, քրէական գործերի պաշտպանութիւն և ամեն տեսակ **ԳՐԱՒՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ**: Ի նկատի ունելով «**ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐԻ**» ունեցած չափազանց **ՇԱՏ** աշխատանքները ցանկացողները հրաւիրվում են **ԸՆԿԵՐԱՆԱԼ**: Ցանկացողները պէտք է յայտնեն մինչև յուլիսի 1-ը: 1—5

Ներսիսեան հայոց Ազգային-հոգևոր դպրոցի աշակերտների տարեկան հարցաքննութիւնը լինելու է հետևեալ կարգաւ:

Ամիս և ամսաթիւ	Դասատուններ	Առարկաներ
Մայիսի		
2	Ե. Զ	Ռուսաց լեզու
3	Ե. Զ	Հայոց լեզու
7	Ե. Զ	Ֆրանսիական լեզու
11	Ե. Զ	Ընդհանուր պատմութիւն
14	Ե. Զ	Անալեբրա և երկրաչափութիւն
15	Պատրաստականի 1 և 2 բաժանմունքները	Բոլոր առարկաներից
16	Պատրաստականի 3 բաժանմունքը	Հայոց լեզու և թուաբանութիւն
17	Պատրաստականի 3 բաժանմունքը	Մնացած առարկաներից
18	Ե	Կրօն և Տօմար
22	Ե	Եկեղեցական պատմութիւն
23	Է	Մանկավարժութիւն
25	Ե	Ռուսաց պատմութիւն
26	Է	Կրօն և Աստուածաբանութիւն
28	Ե	Ֆիզիքա և բնագիտութիւն
30	Է	Հայոց մատենագրութիւն
31	Ե	Հայոց պատմութիւն
Յունիսի		
4	Ե	Աշխարհագրութիւն
5	Է	Ընդհանուր մատենագրութիւն

I, II, III և IV դասատանց գրաւոր քննութիւնները լեզուներից և մատեմատիկային լինելու են I և II դասատանց մէջ մայիսի 22-ին և 23-ին իսկ III և IV դասատանց մէջ մայիսի 24-ին, 25-ին և 27-ին:

Հարցաքննութիւնը մինչև մայիսի 26-ը լինելու է զինի ճաշու $5\frac{1}{2}$ ժամից և այնուհետև առաւօտները 8 ժամից. իսկ պատրաստական դասատան քննութիւնները լինելու են նոյնպէս առաւօտները:

Պաշտօնակատար տեսչի Արշակ Նահապետեանց

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ (ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԻԷՈՒՄ)

Վաճառում են հետևեալ հայերէն գրքերը՝

	Ր.	Կ.
1. Մինաս Չերազ՝ ԳՐԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ	1	—
2. — — ԱԶԳԱՑԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ	1	—
3. — — ԻՆՉ ՇԱՀԵՑԱՆՔ ԲԵՐԼԻՆԻ ՎԵՀԱԺ	—	40
4. — — ՀԱՑԱՍՏԱՆ ԵՒ ԻՏԱԼԻԱՑ	—	60
5. Առաքելեան՝ ԳԷՈՐԳ ՌՕԼԼԷՍՏՕՆ (Թարգմ).	—	60
6. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ ՊԷՊՕ կոմէդիայ 3 ար.	—	60
7. Բարրօ՝ երեխաների առ իրենց ծնողք պարտ.	—	40
8. Տիզէնճեան Տոմարակալութիւն (կազմած)	2	—
9. Կոստանեան՝ Հիւսուածք 3 հատոր	3	—
10. Պող և Վիրգինէ, ոսկէկազմ, գրաբար	3	50

Նուստով լոյս կը տեսնի Ավենարիուսի ԹԱԻԱՄԱԶ ՄԵՂՈՒ անունով գրքոյկը, թարգմանութիւն օր. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆԻ, գեղեցիկ պատկերներով. գինը լինելու է 40 կ. գրքոյկը արժանացել է առաջին ՊԱՐԳԵՎԻ Ֆրէբէլեան ընկերութեան. վաճառվելու է ԿԵՆՏ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ:

ՄԱՅԻՍԻ 8 — ՏԵՂԵԿԱՑՈՒՑ — ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Մայիսի 7-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (զօլոտիմպերիալը)	8	55
Հին 82 պր. մ. արժ. 1000 մ.	1500	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1740	—
Վիգրէնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	241	—
Երկրորդ 5% վիգրէնի »	238	—
Մարսելի կուրսը 244—	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	105	19
Վենայի կուրսը ժամէ 113 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	65
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	320	—
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօցկու . .	7	40
» միւս տեսակը.	7	30
» չաքար աւազը.	5	60
» տրանդիտը. .	5	80
» մաքսը վճարած	12	50
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	7	60
Միւս տեսակը հին սերմից.	7	—
Բուրդը թուշի . . .	7	50
» թարաքամի .	4	20
Աւիւրը Շորաղալու .	1	70
» Երևանի. . .	—	—
Գարին	1	—
Մոմը բնաճարպի (стеар.)	12	60
Մետաքսը Նուխայ. .	200	—
Կախեթունը. . . .	140	—
Կոկոնը Նուխայ (բոժ.)	40	—
Ֆրիզոնը (լասը) Ազուլեաց	55	—
Կօֆէն մօկօի. . . .	27	—
» Լիանի . . .	22	—
« Մարտինիյօն	18	—

ՀՆԴԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան . .	2	
Աւստրիա . . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Մանկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ. Առանձին սենեակներում ամիսը 30—50 բուբլ: Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 բուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 բուբլ ամսական.

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, $9\frac{1}{2}$ մինչև 11 ժամ առաւօտեան: Բժշկապետ Անանով.

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 բուբէ առաւօտեան: Մինչև Միխայլովո (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 բուբէ:

	առաւ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովո. .	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փոթի . . .	9. 40	

	առաւ.	
Փոթիից . .	9. 13	
Ռիօն . . .	12. 13	
Միխայլովո. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4. 8
Թիֆլիս. . .	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փոթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7. իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան.

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր. Բաղուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը. Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ. Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր. Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի. Բելիկլիչի տրակտից երեքշաբթի և շաբաթ.

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակ արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	7
Ամերիկա	8
Պարսկաստան . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը ժամը 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ.

Երկուշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ.

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Ռէյխ աչքի հ.

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ.,

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների.

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ., Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան.

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Ռէյխ աչքի հիւանդութիւններ.

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԵՐԵՒԱՆ. Խ. Կ. Նամակը չենք տպի: Հետաքրքիր չէ:

—ԵՐԵՒԱՆ. Ե. Հ. Ձեր նամակը կը տպենք հետևեալ համարներից մէկում:

—Կ. ՊՕԼԻՍ. Հ. Ստացանք նամակները: Շնորհակալ ենք ձեր աշխատութեան համար: Կը տպենք հետևեալ համարներում:

—ԲԱՇԿԻ. Բ. Մ. Հասցէն կը փոխենք: Զուղարկած բոլոր համարները կուղարկենք:

—ՆՈՒԽԻ. Գ. Վ. Տ. Ե. Նուիրատուների անունները չենք կարող տպել: Այդ մասին մի քանի անգամ դրել ենք:

—ՆՈՒԽԻ. Գ. Նամակից լուր քաղեցինք. Մնացորդը չարժէ տպել:

—ԱԽԱԼՑԽԱ. Ե. Մ. Շնորհակալ ենք ձեր համակրութեան համար:

Дозволено Цензурою 7 Мая 1879 г. Тифлисъ — Տպարան Ա. Ա. Միխելսոնի — Типографія А. А. Михельсона